

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մ. ԳՕՂՐԿՆԸ)

Ես այս պատմութիւնները Բեսսարաբիայում, Ա.ք. քերմանի մօտ, ծովի ափին եմ լսել:

Մի իրիկուն մի խումբ մուգաւաններ, ցերեկուայ ալգեկութից լետոյ, գնացին ծովի ափը. խաղողի որթի թանձր ստուերում մնացինք միայն ես, որ նոյնպէս աշխատում էի նրանց հետ, մէկ էլ պառաւ Խզերգիլը. մենք գետնին պառկած լուռ դիտում էինք, թէ ինչպէս դէպի ծովը գնացողների ուրուազածերը հալում էին գիշերուայ թանձր աղջամուղջի ու տերւենների մուգ կանաչութեան մէջ:

Նրանք գնալիս երգում էին ու ծիծաղում. տղամարդիկ—արուրի գոյն էին, փառահեղ սև բեխերով ու մինչև ուսերն իջնող խիտ գանգուրներով, հագել էին կարճ կապա ու լայն վարտիկ. կանայք ու աղջկերք—զուարթ, որթի պէս ճկուն, մուգ կապտաւուն աչքերով, և նոյնպէս արուրի գոյն էին: Նրանց մետաքսանման ու սև մազերը արձակ էին, և ջերմ ու թեթև քամին խաղալով նրանց հետ, զնգզնգացնում էր ծամերին հիւսած դրամները: Քամին լայն, միապաղաղ ալիքներով հոսում էր, բայց դա երբեմն ասես թէ մի անյայտ բանի վրայից ոստիւն էր անում և, զօրեղ կերպով փչելով, կանանց մազերը փողփողեցնում էր, գլխների չորս կողմից փքուած խոլական բաշ կազմում: Նրանք քանի գնում հեռանում էին մեզանից, իսկ գիշերն ու երևակայութիւնը նրանց աւելի ու աւելի չրքնաղ կացուցանում:

Մէկը ջուլթակ էր ածում... մի աղջիկ քնքոյշ ձայնով երգում էր, ծիծաղի ձայներ էին գալիս... և այդ

բոլոր ձայները երևակայութեան առաջ պատկերանում էին որպէս գոյնզգոյն ժապաւէնների դրասանկ, որոնք ծածանւում էին խաւարի մէջ կուլ գնացող մարդկանց մութ ստուերների վրայ:

Օգը յագեցած էր ծովի սուր հոտով և իրիկնապահին առատ անձրևով ողողուած երկրի պարարտ գոլորշիներով: Դեռ այժմ էլ երկնքի երեսին թափառում էին շքեղ, տարօրինակ ձևի ու գոյնի ամպերի բեկորները—այստեղ—մեղմ, որպէս ծուխի քուլա, կապտառու մոխրա-կապտառուն, այնտեղ—դաժան, որպէս ժայռի բեկորներ, մուգ կաթնագոյն կամ դարչնի գոյնի: Նրանց միջև քնքոյշ փայլում էր աստղերի ոսկէ սլաւոներով շողողուն մուգ-կապույտ երկինքը: Եւ այս ամէնը — ձայներն ու հոտերը, ամպերն ու մարդիկ—դիւթիչ գեղեցիկ էր, բայց թախծալի, ասես թէ հրաշալի հեքիաթի սկիզբ լինէր: Ամեն ինչ զմայլելի էր ու ներդաշնակ. բայց կարծես թւում էր թէ այդ ամենն աճեալութիւնից դադարած մեռնում լինէր, որովհետեւ աղմուկ, կենդանի նեարդային աղմուկ, որ ժամանակ առ ժամանակ աւելի պայծառ բորբոքուէր, քիչ կար. իսկ եղած աղմուկը — թուլ էր, յաճախ կտրւում ու հեռանալով շարունակ մարում և վշտի տխուր թառսնչ դառնում մի անյայտ բանի մասին. գուցէ երջանկութեան մասին, որ բոլորովին անըմբռնելի է ու պատահական:

Ես դիտում էի այս ամենն ու իմ մէջս խորական ցանկութիւններ էին ծնւում,—ցանկանում էի փոշի դառնալ ու քամու բերանն ընկած աշխարհիս չորս կողմը շաղ դալ. ցանկանում էի տափաստանը ողողող ջերմ գետ դառնալ, ծովը թափուել և արևակնագոյն մշուշ դարձած շնչել դէպ երկինք. կցանկայի ինձանով լքցնել այս ամբողջ դիւթական-թախծալի երեկոն... և չգիտեմ ինչու՝ տխուր էի:

—Ինչք՞ դու էլ նրանց հետ չգնացիր, — գլխով անելով հարցրեց ինձ պառաւ Իգերգիլը:

Ժամանակն այդ կնոջը կորացրել, մէջքից կէս էր արել. նրա մի ժամանակ սևորակ աչքերը կորցրել էին իրենց փայլը և այժմս ջրակալում էին: Նրա չոր ձայնը հնչում էր առանց տատանումների, կարծես թէ նա

ոսկրներով էր խօսում: Եւ զարմանալի է, որ դեռ կարողանում էր խօսել...

— Ձեմ ուզում, — ասացի ես նրա հարցմանը:

— Վիլ... դուք, ռսներդ, ծերունի էք ծնուած: Ամենքդ էլ մօռլ էք, կարծես դե լինիք... Մեր աղջկերքը քեզանից վախենում են... Բայց ախր դու դեռ ջահել ես, ուժով...

Լուսինը ծագեց: Նրա սկաւառակը մեծ էր, արիւնի պէս կարմիր. ասես թէ նա դուրս էր եկել այդ տափաստանի խորերից, որ այնքան մարդու միտ էր կլանել ու արիւն խմել, և հէնց այդ պատճառով էլ այսպէս պարարտ ու բեղմնաւոր դարձել: Մեր վրայ ընկան տերւների անկուածաւոր ստուերները, որոնք ցանցի նման ծածկեցին ինձ ու պառաւին, և նրանք դողդոջում էին: Եւ մեզանից ձախ, տափաստանի վրայով սահեցան լուսնի կապուտ փայլով լագեցած ամպերի ստուերները, որոնք աւելի պայծառ ու լուսաւոր էին դարձել: Ծովի կողմից հազիւ հազ հասնում էին մեզ - մէկ՝ ջուլթակն էր արտասուում, մէկ՝ աղջիկը ծիծաղում, մէկ՝ երիտասարդը ճկուն ձայնով երգում, և այս ամենը միախառնւում էր ծովափը ծեծող ալիքների միապաղաղ ծուփին:

— Տես, Լարրան է գալիս:

Ես նայեցայ այն կողմը, որ դողդոջուն ձեռքի չոր մատներով ցոյց էր տալիս պառաւը — այնտեղ միայն ստուերներ էին սահում, անցնում. այդ ստուերների տեղը շատ էր և դրանցից մէկը, որ միւսներէն աւելի խաւար էր ու թանձր, աւելի ցածից ու արագ էր սահում, որովհետեւ դա ընկած էր մի ամպի կտորից, որ երկրիս աւելի մօտիկ էր և միւս ամպերից արագ էր ընթանում:

— Ո՛ւր է որ. այնտեղ մարդ չկայ, — ասացի ես:

— Դու ինձանից էլ կոյր ես եղել: Մտիկ տուր — ահա նա, սև-սև, վազ է տալիս տափաստանի միջով:

Ես մէկ էլ նայեցայ ու ստուերից զատ ոչինչ չտեսայ:

— Այդ հօ ստուեր է: Ինչո՞ւ ես Լարրա ասում դրան:

— Որովհետեւ այդ նա է: Նա այժմ արդէն ստուերի նման է դարձել: Հազարաւոր տարիներ է, որ ապրում է նա, արեւը նրա մարմինը, արեւնն և ոսկրները ցամաքացրել է, և քամին նրանց փոշի դարձրել: Ահա թէ Աստուած ինչ կարող է անել մարդուս իւր հպարտութեան համար...:

— Պատմիր ինձ, այդ ինչպէս է եղել, — խնդրեցի ես պառակտն զգալով, որ պիտի լսեմ այն հրաշալի հեքեաթներից մէկը, որ կազմուած է տափաստանում:

Եւ նա ինձ այս հեքեաթը պատմեց:

I

«Շատ հազար տարիներ է անցել այն օրից, որ այդ բանը պատահեցաւ: Ծովի միւս կողմը շատ հեռուն, արեւդիպոցի կողմը, մի մեծ գետի աշխարք կայ, և այդ աշխարքում ծառի ամեն մի տերեւ, արօտի ամեն մի ցողուն մարդուս այնքան ստուեր է տալիս, որքան որ հարկաւոր է նրան պատսպարուելու համար արեւից, որ սաստիկ այրում է այնտեղ:

«Ահա թէ ինչպիսի առատ երկիր է այն:

«Այդ երկրում ապրում էին մի զօրեղ տոհմի մարդիկ, որոնք հօտեր ունէին և իրենց ուժն ու կորովը վառնում էին գազաններ որսալով: Որսից լետոյ նրանք քէֆ էին անում, երգեր երգում ու պար բռնում աղջկերանց հետ, որոնք տեղն ու տեղը կրակ էին:

«Մի անգամ քէֆի ժամանակ երկնքից իջնում է մի արծիւ և աղջկերանցից մէկին, որ սեւամազ էր ու քնքոյշ որպէս գիշերը, փախցնում: Տղամարդիկ նետերն արձակում են արծուի վրայ, բայց խղճուկ նետերը լետ են թափւում գետին: Այն ժամանակ մարդիկ վեր կացան տեղներից ու գնացին, որ փնտրեն, աղջկանը գտնեն, բայց չգտան: Եւ մոռացան նրան, ինչպէս աշխարքիս վրայ մոռացւում է ամեն բան:

Պառաւր որդոց հանեց և լռեց: Նրա ճրճուան ձայնը հնչում էր այնպէս, որպէս թէ այդ մոռացուած դարերի տրտունջը լինէր, որոնք լիշողութեանց ստուերներ դարձած կուտակուել էին նրա կրծքի մէջ: Իսկ

ծովը հանդարտ կերպով դաշնակցում էր այս հնաուրը և անդուլթեան, որը գուցե հէնց իւր ամբերին էլ ծընունդ էր առել:

«Բայց 20 տարի անցած աղջիկը ինքը եկաւ՝ տանջուած ու չորացած, և նրա հետ էլ մի պատանի, նոյնքան գեղեցիկ ու զօրեղ, ինչպէս ինքն էր քսան տարի առաջ: Եւ երբ որ նրան հարցրին, թէ որտեղ էր, նա պատմեց, որ արծիւը նրան տարել էր սարերն ու այնտեղ, ոնց որ մարդ ու կնիկ, հետն ապրել: Ահա նրա որդին, իսկ ինքն արծիւն այլ ևս չկայ, որովհետեւ երբ որ սկսաւ թուլանալ, նա մի վերջին անգամ էլ սլացաւ դէպի բարձր երկինք և, թռչելով, ծալելով, այնտեղից ծանր կերպով ընկաւ ժայռերի սուր ցցերի վրայ, ընկաւ և ջարդ ու փշուր լինելով մեռաւ...»

«Ամենքն էլ ապշած նայում էին արծուի որդուն և տեսան, որ նա ոչնչով լաւ չէ իրենցից, միայն աչքերը, թռչունների թագաւորի աչքերի նման, սառն էին ու հպարտ: Եւ խօսում էին նրա հետ, իսկ նա ուզէր՝ պատասխան կտար, չուզէր—չէ, և երբ որ ցեղի ախտախկանները հաւաքուեցան, նա նրանց հետ խօսում էր այնպէս, որպէս թէ իրեն հաւասար մարդիկ լինէին: Այս բանը նրանց վիրաւորեց և նրանք, արծուի որդուն բթածայր անփետուր նետ անուանելով, յայտնեցին, որ իրա նման հազարաւոր մարդիկ և գեռ իրանից էլ երկու անգամ տարիքով մեծ հազարաւոր մարդիկ յարգում ու հնազանդում են իրենց, Բայց նա համարձակ կերպով նրանց աչքին նայելով պատասխան տուեց, թէ աշխարհիս վրայ իրա նման էլ մի ուրիշը չկայ. ինչ անենք, թէ ամենքն էլ պատում են նրանց, բայց ինքն այդ բանը չի ուզում անել: Օ... այն ժամանակ արդէն նրանք բոլորովին զայրացան: Զայրացան և ասացին.

—«Նա մեր մէջ տեղ չունի: Թող ուր ուզում է գնալ:

Նա ծիծաղեցաւ ու քայլերն ուղղեց դէպի այն կողմը, ուր որ սիրտն էր ուղում,—գնաց մի սիրուն աղջկայ մօտ, որ աչքերը լաւած նրան էր նայում. գընաց նրա մօտ, մօտեցաւ ու գրկեց: Իսկ դա՝ նրան դա-

տապարառող մեծամեծներից մէկի աղջիկն էր։ Եւ թէպէտ երիտասարդը գեղեցիկ էր, բայց աղջիկը նրան հրեց, հեռացրեց իրենից, որովհետեւ վախենում էր հօրիցը։ Աղջիկը նրան հրեց ու հեռու քաշուեցաւ, իսկ երիտասարդը խփեց նրան և, երբ նա վէր ընկաւ, ոտքը դրեց աղջկայ կրծքին, կոխ տուաւ, այնպէս որ արիւնը աղջկայ բերանից դուրս վազեց, ու ծանր տնքաց, օձի նման գալարուեցաւ ու հոգին փչեց։

Տեսնողների ամենքի վրայ սարսափ ընկաւ, որովհետեւ առաջին անգամն էր, որ նրանց աչքի առաջ այս ձևով կին էին սպանել։ Երկուր ժամանակ ամենքն էլ լուռ ու մուռնջ նայում էին աղջկան, որ աչքերը բաց արիւնշաղախ բերանով ընկած լուռ վրէժ էր խնդրում, նայում էին նաև պատանուն, որ աղջկայ կողքին, բոլորի հանգէպ մեն-մենակ կանգնած այնպէս սառն էր ու հպարտ, որ նոյն իսկ գլուխը չէր խոնարհեցրել և ասեա թէ պատուհաս լինէր հրաւիրում իւր գլխին։ Յետոյ, երբ որ ուշքի եկան, նրան բռնեցին, կապոտեցին ու այդպէս էլ թողին մտածելով, որ եթէ իսկոյն և եթէ սպանելու լինին—շատ հասարակ բան արած կլինին,— ոչ նրան ստորացրած պիտի լինէին և ոչ էլ իրենց գոհացում տուած։

Կիշերը քանի գնում աճում ու զօրանում էր և, տարօրինակ, խաղաղ հնչիւններով լցուած, աւելի ու աւելի ցնորական կերպարանք առնում։ Դաշտամկերը տըխուր սուլում էին տափաստանում, որթի տերեւների միջև գողգոզում էր ճպուռների ապակաձայն ճրճոցը, կանաչ տերեւները շնչում էին ու շշնչում, և լուսնի լիալիր սկաւառակը, որ առաջ արեան գոյնի կարմիր էր, քանի երկրից հեռանում այնքան աւելի դժգոյն էր դառնում, և քանի դժգոյն դառնում, աւելի էլ առատութեամբ կապտաւուն աղջամուղջ գեղում տափաստանի վրայ...։

«Եւ ահա նրանք հաւաքուեցան, որպէս զի միտքանեն, թէ ինչպիսի մահ նշանակեն, որ նրա գործած լանցանքին արժանի լինի...։ Ուզում էին ձիերով նրան կիսել—և այդ էլ դեռ քիչ էր թւում. առաջարկում էին, որ ամեն մէկը մի մի նետ արձակէ նրա վրայ, բայց այս

էլ մերժեցին. առաջարկեցին խարոյկի վրայ արել—
բայց այդտեղ էլ՝ մուխն արգելք պիտի լինէր նրա տան-
ջանքները տեսնելու, դեռ շատ բան առաջարկեցին,
բայց մի այնպիսի լաւ միջոց չգտան, որ ամենքին էլ
դիւրգար ու գոհացնէր: Իսկ նրա մայրը ծնկաչոք ընկած էր
նրանց առաջ ու լուռ էր, և ոչ արցունք և ոչ էլ խօսք
էր գտնում աղաչելու, որ իւր որդուն խնայեն: Երկար
ժամանակ խօսում էին նրանք, և ահա մի իմաստուն,
երկար մտածելուց յետոյ, ասաց.

— «Մի իրեն հարցնենք, տեսնենք ինչո՞ւ այս բանս
արաւ:

«Եւ այդ մասին հարցրին նրան: Նա ասաց.

— «Արձակեցէք կապերս. ես կապուած ձեզ հետ
չեմ խօսի:

«Եւ երբ որ կապերը յետ արին, նա հարցրեց.

— «Ի՞նչ էք ուզում:— Եւ մի այնպիսի եղանակով
հարցրեց, որ կարծես թէ նրանք իւր ստրուկը լինէին...:

— Դու էլ լսեցիր...— ասաց իմաստունը:

— «Ի՞նչ հարկ ունիմ իմ վարմունքս բացատրելու:

— «Որպէս զի հասկանանք արածդ: Դու, գոռոզ,
լսիր: Մէկ բան է, հո մեռնելու ես...: Հասկացրու մեզ,
թէ այս քնչ էր քու արածդ: Մենք պիտի շարունակենք
կեանք վարել և օգուտ է, որ աւելի գիտնանք, քան
ինչ որ գիտենք...:

— «Ի՛նչ լաւ, ասեմ, թէպէտ և գուցէ ես ինքս էլ
ուղիղ չեմ հասկանում այն, ինչ որ պատահեցաւ: Նո
նրան, ինձ թւում է, սպանեցի այն պատճառով, որ
նա ինձ մերժեց...: Իսկ նա ինձ պէտք էր:

— «Բայց ախր նա քոնը չէ,— ասացին նրան:

— «Միթէ դուք ինքներդ միմիայն այն բանով էք
օգտուում, որը ձերն է: Տեսնում եմ, որ ամեն մի մարդ
ունի միայն իւր խօսքը, ձեռները և ոտները... մինչ-
դեռ տիրում է նաև անասուններին, կանանց, հողի...
և ուրիշ շատ բաների...:

«Նրան ասացին, որ մարդս իւր վերցրած ամեն բա-
նի համար տալիս է իւր անձից,— իւր խելքը և ուժը,
իւր կեանքն ու ազատութիւնը: Իսկ նա պատասխան
տուեց, թէ ինքն ուզում է իւր անձն ամբողջ պահպանել:

«Երար ժամանակ խօսում էին հետը և, վերջապէս, նրա պատասխանից տեսան, որ նա ինքն իրեն աշխարհիս երեսին առաջինն է համարում և թէ բացի իրանից ոչ մի բան չի տեսնում: Մինչև անգամ ամենքն էլ սարսափ զգացին, երբ որ հասկացան, թէ ինչպիսի մենակութեան էր դատապարտել նա իւր անձը: Նա ոչ տոհմ ունէր, ոչ ծնող, ոչ քաջագործութիւն, ոչ անասուն, ոչ կին, և նա այդ բաները չէր էլ ուզում ունենալ:»

Ծովափին հրաշալի ու զուարթ ծիծաղում էին աղջկերբք: Իսկ մի տղամարդ բարձր ձայնով երգում էր: Երբեմն մի քանի հոգի միաժամանակ ձայնակցում էին նրան: Զայների երամը թռչում էր օդի մէջ և լանկարծ անհետանում, ասես թէ մէկը միանգամից բռնում էր նրանց, բռնում ու թաք կացնում...:

«Երբ որ այդ մարդիկ տեսան, թէ երկնուց պատուհաս չպիտի իջնի նրա գլխին, սկսան նորից խորհուրդ անել, թէ ինչ պատիժ տան նրան: Բայց այժմ արդէն նրանք երկար ու բարակ չխօսեցին, որովհետև այն իմաստունը, որ առժամանակ նրանց թոյլ էր տուել որ խօսեն, ասաց.

— «Կացէք: Պատիժ կայ: Մի սարսափելի պատիժ. հազար տարի էլ որ միտք անէի, մի այդպիսի պատիժ չէի գտնիլ: Այդ պատիժը հենց նրա իրա մէջն է: Թողէք նրան, թող տգատ մնայ: Ահա ձեզ պատիժ:

«Նւ ալդտեղ մի մեծ բան կատարուեց: Անամպ երկինքը որոտաց: Այդ զօրութիւններն էին, որ իմաստունի խօսքն էին հաստատում: Ամենքն էլ գլուխ տուին ու հեռացան: Իսկ նա, այդ պատանին, որ այժմ արդէն Լարրա անուէն էր կրում, որ նշանակում է մերժուած, գուրս շարտուած,—այդ պատանին բարձր ձայնով քրքրչում էր այս մարդկանց ետևից, որ հեռանում էին իրենից, ծիծաղում էր և, հօրը նման, մեն մենակ մնաց ազատ, բայց նրա հայրը մարդ չէր...: Մինչդեռ սա—մարդ էր: Եւ նա սկսաւ թռչունի նման ազատ կեանք վարել: Նա գալիս մտնում էր այդ մարդկանց մէջ և ինչ որ սիրտն ուզում էր,—տաւար, աղջկերք—փախցնում տանում: Նրա վրայ նեո էին արձակում, բայց

նետը վնաս չէր տալիս, որովհետեւ նրա մարմինը շրջապատուած էր մարդկանց համար անտեսանելի երկնային պատուհասով: Նա ճարպիկ էր, գիշատիչ, ուժեղ, դաժան, նա մարդկանց հետ դէմ առ դէմ չէր պատահում: Նրան միայն հեռուից էին տեսնում: Եւ ով որ տեսնէր, նրա վրայ ինչքան ուզէր, նետ կարձակէր: Եւ երկար ժամանակ նա մեն-մենակ, շատ երկար տասնեակ տարիներ, պտոյտ էր անում մարդկանց շուրջը: Բայց մարդ կարող չէ իր սաղ կեանքը մէկ բան միայն անել: Միշտ կարելի չէ հաճոյք ստանալ, — հաճոյքն էլ իւր գինը կ'որոցնէ և տանջուել էլ կ'ուզենաս...: Եւ ահա նա մի անգամ մօտ եկաւ մարդկանց, և երբ որ մարդիկ յարձակուեցան վրան, նա տեղիցն անգամ չշարժուեցաւ և ոչնչով ցոյց չտուեց, թէ ուզում է պաշտպանուել: Այն ժամանակ մարդկանցից մէկը գլխի ընկաւ և շտապով ու բարձր կանչեց.

— «Ձեռք չտաք: Նա ուզում է մեռնել:

Եւ չցանկանալով թեթեւցնել այն մարդու վիճակը, որ իրենց չարիք էր հասցնում, բոլորն էլ կանգ առան և չուզեցին նրան սպանել: Նրանք կանգ առան ու սկսան վրան ծիծաղել: Իսկ նա այս ծիծաղը լսելով, դողում էր և շարունակ ձեռքով կ'ուրձքն էր բռնում ու մի բան որոնում կրծքի վրայ: Եւ լանկարձ նա գետնից քար վերցրած յարձակուեցաւ մարդկանց վրայ: Բայց նրանք, խոյս տալով նրա հարուածներից, իրենք ձեռք չբարձրացրին նրա վրայ, և երբ որ նա վշտալի ճիչ արձակելով, յագնած գետին փռուեցաւ, նրանք մի կողմ քաշուեցան ու սկսան դիտել: Եւ ահա նա վեր կացաւ տեղից և, գետնից վերցնելով կռուի միջոցին մէկի կորցրած դանակը, խփեց կ'ուրձքը: Բայց դանակը կոտրուեց, կարծես քարի դիպած լինէր: Եւ դարձեալ վեր ընկաւ գետին ու երկար ժամանակ գլուխը գետնով էր տալիս: Բայց գետինը, գլխի հարուածներից խորացած, հեռանում էր նրանից:

— «Նա չի կարող մեռնել, — ուրախութեամբ ասացին տեսնողները:

«Եւ նրան մենակ թողած՝ հեռացան: Նա մէջքի վրայ պառկած էր գետնին և տեսնում — բարձր երկրն—

քում, սև բծերի նման, սաւառնում էին հզօր արծիւ-
ները: Պառկած էր նա և նրա աչքերի մէջ այնքան
վիշտ կար, որ դրանով կարելի էր բոլոր աշխարհիս
մարդկանց էլ թունաւորել: Եւ այդ օրուանից նա մե-
նակ ու ազատ մնացած, մահ էր որոնում: Եւ ահա նա
ըջում է, ամեն տեղ ըջում...: Տեսնում ես, նա ար-
դէն ստուերի նման է դարձել և յաւիտեան էլ այդպէս
կմնայ: Նա ոչինչ չի հասկանում—ոչ մարդկանց խօսքերն
է հասկանում, ոչ նրանց արածը:—Եւ շարունակ որո-
նում է, ըջում, ըջում...: Նրա համար կեանք չկայ,
և մահը նրան չի ժպտում: Եւ մարդկանց մէջ տեղ
չկայ նրա համար...: Ահա թէ մարդս ինչպէս է պատ-
ժոււմ գոռօգոյթեան համար»:

Պառաւը ոգոց հանեց, լուեց, և նրա գլուխը,
կրծքի վրայ կախ ընկնելով, մի քանի անգամ տարօրի-
նակ կերպով տատանուեց: Ես երկար ժամանակ աչքս
յառած դիտում էի նրան: Նա գլուխը տատանելով նիւ-
հում էր և կամացուկ մի բան շնչում... գուցէ աղօթք
էր ասում:

*
*
*

Ծովը լուռ էր. միայն ժամանակ առ ժամանակ
լսելի էր լինում մի կարճ, խաբուսիկ ձայն և անմիջա-
պէս մեռնում: Սեւթուր, ծանր, լերան շղթաների նման
դաժան գծագրուած ամպ էր բարձրանում ծովից ու դէ-
պի տափաստան սողում: Նրա գագաթից պոկ էին դա-
լիս ամպի պատառները, առաջ վազում և աստղերն ի-
րար ետեւից մարում: Ծովը սկսեց աղմկուել: Մեր մօ-
տակայքում, խաղողի թփերի մէջ համբուրւում էին,
ըշնչում ու շնչում: Հեռու տափաստանում մի շուն էր
ոռնում...: Օդը քանի գնում խեղդուկ էր դառնում ու
մարդուս ընչերը խախտ ածող մի տարօրինակ հոտով
գրգռում նրա նեարդերը: Երկրի վրայ ընկած էին ամ-
պերի ստուերների խիտ երամները, որ սողոսկում էին
երկրի վրայ, սողում, անհետանում, նորից երևում...:
Լուսինը մարեցաւ, նրա տեղը արեակնային մի պղտոր
քիժ էր մնացել, և այդ էլ ժամանակ առ ժամանակ բո-
լորովին ծածկւում էր ամպի կապտաւուն կտորով: Եւ

Հեռուն, տափաստանի մէջ, որ այժմ արդէն սև ու զարհուրելի էր դարձած և ասես թէ իւր մէջ մի բան ունէր ծածկած ու գաղած, մանր կապույտ կայծեր էին փայլելում: Նրանք մի առ փայլեան տեղ-տեղ բռնկուում էին ու նորից մարում, կարծես թէ մի քանի հոգի, տափաստանի մէջ շաղ եկած, լուցկի վառելով մի բան էին որոնում, իսկ քամին լուցկիներն իսկոյն էլ հանգցնում էր: Դրանք կրակի շատ տարօրինակ լեզուակներ էին և անըջային մի բան ակնարկում:

— Տեսնում ես, այդ կայծերը, — հարցրեց Իզերգիլը:

— Այդ կապոյտ կայծերը, — հարցրի ես տափաստանի կողմը ցոյց տալով:

— Կապոյտ: Այո, հէնց այդ կապոյտ կայծերը...: Նշանակում է, որ դեռ ևս թռչում են...: Ե՛լ — է... վերջացաւ, ես էլ բան չեմ տեսնում: Հիմի ես շատ բան չեմ կարողանում տեսնել:

— Ինչքան են առաջանում այդ կայծերը, — հարցրի ես պառաւին:

Ես առաջ էլ էի այդ կայծերի առաջ գալու մասին մի քանի բան լսել, բայց ուզում էի տեսնել, թէ ինչպէս էր նոյն բանը պառաւ Իզերգիլը պատմելու:

— Այդ կայծերը Դանկօի այրուած սրտիցն են ղուրս գալիս: Մի ժամանակ աշխարքի երեսին եղել է մի սիրտ, որ այրուել, կրակ է դարձել...: Եւ ահա դրանք այդ կրակի կայծերն են: Այդ էլ պատմեմ քեզ...: Սա էլ հին հեքիաթ է...: Հին, ամենը հին բաներ: Տեսնում ես հնուժեան մէջ ինչքան բան կայ...: Հիմի հօ այդպիսի բաներ չկան — ինչ հին ժամանակների գործերը կան, ինչ մարդիկը, ինչ էլ հեքիաթները...: Ինչքան է: Ի՛նչ ասա տեսնենք: Ձեա կարող ասել: Դու քնչ գիտես որ: Ի՛նչ գիտէք դուք ջահելներդ: Ե՛հ — հէ...: Մի լաւ մտիկ տուէք հին ժամանակներին — այնտեղ ամեն բանի պատասխանն էլ կգտնէք...: Իայց դուք չէք մտիկ տալիս, դրա համար էլ ապրել չգիտէք...: Միթէ ես կեանքը չեմ տեսնում: Ախ, ամեն բան էլ տեսնում եմ, թէկուզ աչքերս փչացած լինին: Ես տեսնում եմ, որ մարդիկ չեն ապրում, հապա շարունակ չափչփում են չափչփում, ու իրենց սաղ կեանքը դրանով անցկաց-

նում: Եւ երբ որ, ժամանակը վատնելով իրենք իրենց կողոպտում են, սկսում են իրենց բաղդի վրայ լալ: Այստեղ բաղդն ինչ անի: Ամեն մարդինքն է իւր բաղդի տէրը: Ես հիմիկուայ ժամանակն ամենտեսակ մարդիկ տեսնում եմ, բայց զօրեղ մարդիկ չեմ տեսնում: Ո՞ւր են դրանք...: Սիրուն տղամարդիկ էլ են պակասում:

Պառաւր մտքի մէջ ընկաւ, թէ որտեղ են անհետացել կեանքի միջից զօրեղ ու սիրուն տղամարդիկ և, միտք անելով, դիտում էր մութ հեռաստանը, կարծես այնտեղ էր իւր պատասխանը որոնում:

Ես նրա պատմելուն էի սպասում և լուռ էի վախենալով, թէ մի գուցէ եթէ բան հարցնեմ, նա դարձեալ շեղուի...:

II

Եւ նա սկսաւ պատմել:

«Հին ժամանակները աշխարքիս վրայ չգիտեմ որտեղ, մարդիկ էին ապրում: Գիտեմ, որ այդ մարդկանց տաբօրները երեք կողմից շրջապատուած էին ահագին, անանցանելի անտառներով, իսկ չորրորդ կողմը—տափառտան էր: Դրանք զուարթ, ուժեղ ու խիզախ մարդիկ էին, որ շատ բանի աչք չունէին...: Երեւի չինգա նա էին: Եւ ահա մի անգամ մի այսպիսի խառնակ ժամանակ հասաւ՝ չգիտեմ որտեղից ուրիշ ցոզեր եկան և սրանց անտառի խորքերը քշեցին: Անտառում ճահիճ էր ու խաւար, որովհետեւ դա հնաւուրց անտառ էր, և նրա ճիւղերն այնպէս սաստիկ հիւսուել էին իւրար, որ նրանց արանքից երկինքը չէր երևում, ու խիտ տերևների միջից արեւի ճառագայթները հագիւ էին կարողանում ճամբայ գտնել ու ճահիճներից հանել: Բայց երբ որ ճառագայթներն ընկնում էին ճահճի ջրի վրայ, մի այնպիսի ժահահոտ էր բարձրանում, որ մարդիկ ճանճի նման կոտորւում էին: Այն ժամանակ այդ ցեղի կանայք ու երեխաները սկսան ողբ ու շիւան անել. իսկ տղամարդիկ մտքի ծովն ընկան ու թախիծը պաշարեց նրանց: Պէտք էր այս անտառից հեռանալ, իսկ

գրա համար միայն երկու ճանապարհ կար՝—մէկը դէպի յետ, ուր զօրեղ ու չար թշնամիներն էին, միւսն առաջ—ուր հսկայ ծառերն իրենց հզօր ճիւղերով խիտ առ խիտ իրար էին գրկած, իսկ հանգուցաւոր արմատները խրել էին խորը, ճահճի տղմի մէջ: Ծառերը, որ ցերեկուայ միգամած մթնշաղին, կարծես, քարացած, կանգնած էին լուռ ու անշարժ իրիկունները, խարոյկների լուսով, ասես թէ աւելի ևս մօտ ու պինդ շրջափակում լինէին այդ մարդկանց: Եւ միշտ, գիշեր թէ ցերեկ, այդ մարդիկ, որ սովոր էին տափաստանի ազատ կեանքին, այժմ ընկած էին մի օղակի մէջ, որն ասես թէ հէնց այն է պիտի հուպ ապ, խեղդէր նրանց: Բայց աւելի ևս զարհուրելի էր լինում, երբ քամին բաղխում էր ծառերի կտտարներին և բոլոր անտառը խուլ աղմուկ հանած կարծես թէ սպառնում էր ու թաղման կարգ կտտարում այդ մարդկանց համար, որոնք իրենց թշնամու երեսից այդտեղ ասպնջական էին ընկել:

Բայց և այնպէս զօրեղ մարդիկ էին դրանք և կարող էին գնալ, կռիւ մղել այն ցեղի դէմ, որ մի անգամ լաղթել էր իրենց, բայց նրանք կարող չէին կռիւների մէջ մեռնել, որովհետև ուխտ, կտակ ունէին, և այդ ուխտը իրենց մահուամբ կարող էր իրենց հետ էլ կորչել, կեանքի միջից վերանալ: Լուստի և երկոյն գիշերները նրանք ճահճի թունաւոր ժանտահոտի մէջ նստած, անտառի խուլ շշուկով, միտք էին անում:

Նրանք նստած էին, իսկ խարոյկների պտտճառած ստուերները լուռ պար բռնած թռչկոտում էին նրանց շուրջ, և ամենքին էլ այնպէս էր թւում, թէ այս ստուերներ չեն, որ պար են գալիս, հապա անտառի ու ճահճի չար ոգիներն են լաղթանակ տանում...: Մարդիկ շարունակ նստած միտք էին անում:

Բայց ոչ մի բան—ոչ աշխատանքը, ոչ կանայք—մարդուս մարմինն ու հոգին այնքան չեն թուլացնում, ինչքան թախծալի խոհերը, որոնք օձի նման կրծում են մարդուս սիրտը: Եւ միտք անելուց թուլացան այդ մարդիկը...:

Ահը ծնուեց նրանց մէջ ու կաշկանդեց նրանց եր-

Վաթէ ձեռքերը, կանալք ժահահոտից մեռածներէ դիակներէ վրայ և ահից կաշկանդուած կենդանի մնացածներէ վիճակը ողբալով սարսափ էին պատճառում,— և անտառի մէջ սկսան նախ երկիւղած ու թոյլ, իսկ ասլա աւելի ու աւելի զօրեղ կերպով լսուել երկչոտութեան ձայներ...: Արդէն ուզում էին գնալ թշնամու մօտ և իրենց անձն ու ազատութիւնը նուէր տանել նրանց. և այլ ևս ոչ ոք, աչքները մահից վախեցած լինելով, ստրկական կեանքից չէր խորշում...:

Բայց այստեղ երևան եկաւ Դանկօն ու մենակ ամենքին փրկեց»:

Ինչպէս երևում է պառաւըշատ անգամ էր պատմել Դանկօի բոցավառ սրտի պատմութիւնը, որովհետեւ նախադասութիւններն երկար ու հարթ ժապաւէնի նըման իրար ետեւից թափւում էին նրա բերանից: Նա պատմում էր երգակ ձայնով, և նրա ձայնի ճրճուան ու խուլ հնչիւնները պարզ կերպով իմ առաջս նկարագրում էին այդ անտառի խշշոցը, ուր ճահճի թունաւոր շնչից մեռնում էին դժբաղդ, հալածուած մարդիկ...:

«Դանկօն — այդ մարդկանցից մէկն էր, մի գեղեցիկ երիտասարդ: Գեղեցիկները միշտ համարձակ են լինում: Եւ ահա նա ասում է նրանց, իւր ընկերներին.

— «Շատ միտք անելով բան չի դուրս գալ: Ով որ ուզինք չի անում, նրան էլ ուզինք լի լինիլ: Ի՞նչ ենք ասի ու վախով ուժերս փչացնում: Վեր կացէք, գնանք անտառի խորքերը և անցնենք ծայր է ծայր, մի տեղ հօ դա պիտի վերջանալ — աշխարհիս վրայ ամեն բան ծայր ու վերջ ունի: Գնանք. դէ, վեր կացէք...:

«Մտիկ տուին նրան ու տեսան, որ նա ամենքից լաւն է, որովհետեւ նրա աչքերի մէջ շատ ոյժ ու կենդանի կրակ էր փայլում:

— «Ծաւր մեզ, — ասացին նրանք:

«Եւ նա տարաւ նրանց...»:

Պառաւը լռեց ու նայեցաւ տափաստանի կողմը, ուր խաւարը շարունակ բարձրանում էր: Հեռուն մի տեղ Դանկօի բոցավառ սրտի կայծերը բռնկւում էին և միայն մի վայրկեան բացւող օդային կապուտ ծաղիկ թւում:

«Դանկօն նրանց առաջ տարաւ: Ամենքն էլ միահամուռ գնացին նրա ետեւից, նրան հաւատում էին: Ծանր ճամբայ էր: Մուլթն էր, և ամեն մի քայլափոխին ճահիճը բաց էր անում իւր նեխած ագահ բերանը, մարդկանց կուլ տալիս, իսկ ծառերը ամուր պատինման կտրում էին նրանց առաջը: Նրանց ճիւղերը օձի նման փաթաթուած էին իրարու, ամեն կողմ արմատներ ձգուած. և ամեն մի քայլը շատ քրտինք ու արիւն նստեց այդ մարդկանց: Երկար ժամանակ գնում էին....»

Գանի գնում անտառը խտանում էր, ոյժերը՝ պակասում: Եւ ահա նրանք սկսան Դանկօի դէմ տրտնջալ ասելով, թէ իջուր նա, այդ երիտասարդ ու անփորձ Դանկօն, իրենց չգիտես ուր է տանում: Բայց Դանկօն գնում էր նրանց առաջից ու կայտառ էր և ճակատը բաց:

«Բայց մի անգամ անտառում փոթորիկ բարձրացաւ, և ծառերը խուլ ու սպառնալից շշուճ բարձրացրին: Եւ անտառի մէջ մի այնպիսի խաւար տիրեց, որ կարծես ի մի էին հաւաքուած այն բոլոր գիշերները, որ աշխարհիս ծնուելու օրից գոյութիւն ունէին: Հսկայ ծառերի միջով առաջ էին գնում մանր մարդիկը, կայծակի ահարկու աղմուկի մէջ առաջ գնում: Իսկ հսկայ ծառերը տատանուելով ճրճում էին ու զայրագնած երգեր ղողանջում, և շանթերը, անտառի կատառներին թռչկոտալով, մի առ վայրկեան իրենց կապոյտ սառը լուսով լուսաւորում էին անտառը և մարդկանց վախեցնելով ու գրգռելով, ինչպէս առջացել էին, այնպէս էլ տրագ անհետանում: Եւ ծառերը, կաթակներին սառը լուսով լուսաւորուած, կարծես կենդանի լինէին ու իրենց երկայն, ծռտիկ ձեռները մեկնած խիտ առ խիտ իրար էին հիւսել և աշխատում էին թոյլ չալ, որ այդ մարդիկ խաւարի իշխանութիւնից հեռանան: Իսկ ճիւղերի խաւարի միջից նրանց էր մտիկ տալիս մի զարհուրելի, մութը և սառը բան:

Դժուար ճամբայ էր, և մարդիկ, ճամբից յոգնած, յուսահատուում էին: Բայց նրանք ամաչում էին իրենց անզօրութիւնը խոստովանուել, և ահա նրանք չարա-

ցած ու զայրացած, ընկան Դանկօի վրայ, մի մարդ, որ նրանց առջևիցն էր գնում։ Եւ սկսան նրան կշտամբել, որ չգիտէ իրենց կառավարել,—հապա՛ւ։

Նրանք կանգ առան և անտառի յաղթական ձայնով, դողդող խաւարի մէջ, յոգնած ու չորացած, սկսան Դանկօին դատել։

—Երու, առացին նրան,—մեզ համար չնչին ու վնասակար մարդ ես։ Դու մեզ առաջ տարար ու յոգնեցրիր, և այդ բանի համար դու կմեռնես։

Եւ որոտն ու կայծակը հաստատեցին նրանց վրճիւր։

—Ասացիք—տօ՛ր, և ես տարայ ձեզ,—կանչեց Դանկօն կուրծքը նրանց դէմ արած։—Ես քաջութիւն ունիմ ձեզ առաջ տանելու, ահա թէ ինչու տարայ ձեզ։ Իսկ դուք։ Դո՛ւք ինչ արիք ինքներդ ձեզ օգնելու համար։ Դուք միայն գալիս էիք և չէիք կարողանում այնքան քաջութիւն պահպանել, որ կարող լինէիք աւելի երկայն ճամբայ երթալ։ Դուք միայն գնում էիք, ոչ խտրի հօտի նման առաջ գնում։

Բայց այս խօսքերը նրանց աւելի ևս կատաղեցրին։

—Երու կմեռնես։ Կմեռնես,—գոռում էին նրանք։ Իսկ անտառը շարունակ դողանջում էր ու ղօղտնջում և արձագանգ տալիս նրանց աղաղակին, իսկ փալաւը խաւարը ծուէն-ծուէն էր անում։

Դանկօն նայեցաւ նրանց, որոնց համար նեղութիւն էր յանձն առել, և տեսաւ, որ նրանք գազանի նման են։ Շատ մարդիկ շրջապատել էին նրան և նրանց դէմքին ոչ մի ազնուութեան նշան, չկար, և նրանք իրեն չպիտի խնայէին։ Այն ժամանակ նրա սրտումն էլ ցատումն առաջացաւ, բայց մարդկանց խղճալուց ցատումը իջաւ։ Նա այդ մարդկանց սիրում էր և մտածում, որ եթէ ինքը չլինի, գուցէ նրանք կորչին։ Եւ ահա նրա սիրտը բոցավառուեց նրանց փրկելու և հեշտ ճամբայ հանելու ցանկութեամբ, և այն ժամանակ նրա աչքերի մէջ փայլեցան այն հզօր կրակի ճառագայթները...

Իսկ նրանք, այդ բանը տեսնելով, կարծեցին, թէ նա կատաղել է և դրանից է որ նրա աչքերն այդպէս պայծառ բոցակալել են, և նրանք գալլերի նման զգաստ

սպասում էին, թէ իրենց հետ կռիւ է սկսելու, և սկսան աւելի ևս մօտ գալ, շրջապատել նրան, որպէս զի բռնեին և սպանելը հեշտ լինի։ Իսկ Դանկօն նրանց մօտքինը հասկացաւ և զրանից նրա սիրտն աւելի պայծառ վառուեց, որովհետեւ նրանց այդ միտքը վիշտ էր պատճառում նրան։

«Իսկ անտառը շարունակ իւր մուլը երգն էր ասում, և ամպը որոտում էր, անձրեւը թափւում...»

— «Ե՛նչ անեմ մարդկանց համար, — ամպըրպից զօրեղ գողաց Դանկօն։

«Եւ յանկարծ նա ձեռնելով պատառեց իւր կուրծքը, պոկեց, դուրս քաշեց, իւր սիրտը և բռնած՝ դէսի վերեւը բարձրացրեց։

«Իսկ սիրտը արեւի նման պայծառ, դեռ տրեւից էլ պայծառ վառւում էր, և ամբողջ անտառը, դէպի մարդիկ տածած այս մեծ սիրտը ջահով լուսաւորուած, լուռ մնաց, իսկ խաւարը վերացաւ նրա լուսից և այնտեղ, անտառի խորքում, գողգողալով ընկաւ ճահճի նեխած բերանի մէջ։ Իսկ մարդիկ զարմանքից քալւ էին կտրած։

— «Դնանք, — կանչեց Դանկօն և առաջ վազեց, իւր տեղը բռնեց. նա սիրտը բարձր պահած՝ մարդկանց ճանապարհն էր լուսաւորում։

«Նրանք, հետաքրքրուած ու սքանչացած, վազեցին նրա ետեւից։ Այն ժամանակ անտառը, զարմացմամբ իւր կատարը տատանելով, նորից խշշաց, բայց նրա խշշոցը խլացաւ վազող մարդկանց ոտնաձայների մէջ։ Բոլորն էլ արագ ու համարձակ առաջ էին վազում՝ բոցավառ սրտի հրաշալի տեսքից զմայլած։ Այժմ էլ էին մեռնում, բայց մեռնում էին առանց տրտուկի ու արտասուքի։ Իսկ Դանկօն շարունակ առջւումն էր, և նրա սիրտը այրւում էր հա այրւում։

«Եւ հա յանկարծ անտառը տեղի տուաւ նրանց առջև, տեղի տուաւ ու լետ մնաց — լուռ և թանձր։ Իսկ Դանկօն և այդ բոլոր մարդիկը յանկարծ իրենք իրենց տեսան անձրեւից մաքրուած մաքուր օդի և արեւի չուսով մի ամբողջ ծովի մէջ։ Փոթորիկն այնտեղ, երեւում էր, անտառի վերեւը, իսկ այստեղ փայլում էր ա-

ըւը, տափաստանը շնչում, արօտը անձրևի շողակներով շողշողում և գետը ոսկու գոյն ունէր....

Երեկոյ էր, և արեւմտոցի լոյսից գետը կարմրել, Դանկօի պատառած կրճքից հոսող ջրմ արեան գոյնն էր ստացել:

Մեռնող, խիզախ, հպարտ Դանկօն՝ աչքը ձգեց առաջը տարածուած տափաստանի հեռաստանին, — ուրախ ուրախ աչքը ձգեց իւր առաջ բացուած ազատ երկրին և հպարտօրէն ծիծաղեցաւ: Ապա վեր ընկաւ, մեռաւ:

Խաղաղ շնչում էին ապշած ծառերը, որ լետեւ էին մնացած, և Դանկօի արիւնով ներկուած արօտը նրանց արձագանք էր տալիս:

«Իսկ մարդիկ, ուրախ ու լուսով լի, չնկատեցին նրա մահը և չեն տեսնում, որ Դանկօի գիակի կողքին դեռ վառուում է նրա համարձակ սիրտը: Միայն մի զգոյշ մարդ նկատեց այդ և, չգիտեմ ինչից վախեցած, ոտքով կոխեց հպարտ սիրտը...: Եւ ահա սիրտը, կայծեր դարձած, հանգաւ...:

— «Ահա որտեղից են առաջանում տափաստանի այն կոպույտ կայծերը, որ փոթորկից առաջ փայլփրլում են:

*
* *

Այժմ, երբ պառաւը իւր գեղեցիկ հեքիաթն աւարտեց, տափաստանում սարսափելի լուռութիւն տիրեց, ասես թէ նա էլ էր ապշած խիզախ Դանկօի ոյժի վրայ, որ մարդկանց համար իւր սիրտն էր կրակել և մեռել էր առանց մի վարձատրութիւն խնդրելու: Մէջքը խաղողով լի կիժոցին դէմ առած, պառաւը քնել էր և երբեմն երբեմն ցնցում: Ես նայում էի նրան ու միտք անում. — դեռ ինչքան հեքիաթներ և լիշողութիւններ կան մնացած նրա գլխում: Ես միտք էի անում Դանկօի այրուող մեծ սրտի մասին, և մարդկային երեւակայութեան մասին, որ այսպիսի սիրուն և զօրեղ աւանդութիւններ էր ստեղծել, միտք էի անում հին-հին ժամանակների մասին, երբ հերոսներ ու քաջազնութիւններ կային, և այժմու խղճուկ ժամանակի մասին, որ աղքատ է զօրեղ մարդկանցով և խոշոր գէպքերով, բայց հարուստ է

սառն անվտաճութեամբ, որ ծիծաղում է ամեն բանի վրայ, — միտք էի անում անկենդան ծնուած սրտի տէր չնչին մարդկանց խղճով ժամանակի մասին...

Գամին փչեց և ցնցոտիների տակից մերկացրեց խոր քնի մէջ ընկած պառաւ Իգերգիլի չոր կուրծքը: Նւ ծածկեցի նրա պառաւած մարմինը և ինքս էլ նրա կողքին, գետնին պառկեցայ: Տափաստանում լռութիւն էր ու մութը: Երկնքի երեսով դեռ ևս դանդաղ ու տաղտկալի սողում էին ամպերը...: Ծովը սաստիկ տխուր ու խուլ ձայներ էր հանում: Պառաւ Իգերգիլը խոր քուն էր մտել...: Նա կարող էր այլ ևս երբէք չզարթնել:

Քարդմ. ՄՈՒՇԷ ՎԱՐԴ.

